ՆԱԽԱԳԻԾ

Պ-244-27.04.2022-ԱՍ-011/0

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» 2006 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-233-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝. «Ներհամայնքային կանոնավոր երթուղիների մրցույթին ներկայացվող բոլոր ավտոբուսները պետք է մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար, իսկ միջմարզային և ներմարզային կանոնավոր երթուղիների մրցույթին ներկայացվող հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի տրանսպորտային միջոցների նվազագույն քանակը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 2. Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի «նրանց իջեցումը:» բառերից հետո լրացնել նոր նախադասություն հետևյալ շարադասությամբ.՝ «Կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող ավտովարորդներն անհրաժեշտության դեպքում պետք է աջակցեն հաշմանդամություն ունեցող անձանց (ներառյալ նստեցնել, իջեցնել, տեղեկատվություն տրամադրել) օգտվելու տրանսպորտային սպասարկման իրենց իրավունքից:»:

Հոդված 3. Օրենքի 15-րդ հոդվածը լրացնել նոր մասով՝ հետևյալ նախադասությամբ. «4. Ավտոկայարանային գործունեության կազմակերպումը պետք է համապատասխանի հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության պահանջներին, որոնք սահմանվում են Ավտոկայարանային գործունեության կազմակերպման կարգով:»:

Հոդված 4. Օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասի «զամբյուղներով:» բառից հետո լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ շարադասությամբ՝ «Մերձքաղաքային, միջքաղաքային, ներմարզային, միջմարզային և միջպետական փոխադրումներից օգտվելիս հաշմանդամություն ունեցող անձն իրավունք ունի ծանրոցից և ուղեբեռից բացի իր հետ անվճար փոխադրելու նաև աջակցող միջոցներ:»:

Հոդված 5. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:
2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ համապատասխան ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:
3. Սույն օրենքի 5-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում օրենքի ուժի մեջ մտնելու պահից մեկ տարի հետո:
4. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը մրցութային եղանակով արդեն ընտրված և կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև օպերատորների կողմից սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին շահագործվող ներհամայնքային կանոնավոր երթուղիները 2023 թվականի հունվարի 1-ից հետո ավտոտրանսպորտային միջոցներով համալրելու կամ փոխարինելու դեպքում դրանք պետք է մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար: